Բայց հարկից թույլ կտան ավելի շատ «կտրել» «Սպիտակ» (փաստաթղթավորված) գործարքների դեպքում բիզնեսը հիմա էլ կարող է նվազեցնել իր հարկը (բազային 5%-ից մինչև 1,5%):

Բացի դրանից, հնարավոր կլինի հարկի հաշվարկից հանել վճարված աշխատավարձերը: Բերենք նախագծի հետ չկապված, տեսական օրինակ. եթե ՄՈԸ-

ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋՀԱՐԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի քանի ամիս սևած ֆինանսներից հետո ՀՀ ֆինանսների նախարարությունն ավարտին է հասցրել...

Չարկը կբարձրացնեն... Մտալիր, բարձր ճշտություն չափակալող գնահատականներով՝ շրջհարկի ֆինանսական բեռը 2 - 2,5 անգամ ավելի թեթև է, քան ԱԱՀ/շահութահարկինը:

Որպեսզի շրջհարկ վճարողները չունենան այդքան ակնհայտ առավելություններ, նրանց հարկն ուզում են էապես բարձրացնել ու մոտեցնել ԱԱՀ/շահութահարկի ռեժիմին:

«Այսպիսով խոշոր բիզնեսը ազդակ չի ունենա արհեստականորեն տրոհվելու՝ շրջհարկի դաշտ մտնելու համար, իսկ փոքրը չի փորձի ամեն գնով այնտեղ մնալ», - նշում է Ալավերդյանը:

Շրջհարկով հարկման չափանիշը նախատեսվում է չփոխել (տարեկան 115 միլիոն դրամից ոչ ավել շրջանառություն):

Բայց հարկից թույլ կտան ավելի շատ «կտրել» «Սպիտակ» (փաստաթղթավորված) գործարքների դեպքում բիզնեսը հիմա էլ կարող է նվազեցնել իր հարկը (բազային 5%-ից մինչև 1,5%):

Բացի դրանից, հնարավոր կլինի հարկի հաշվարկից հանել վճարված աշխատավարձերը: Բերենք նախագծի հետ չկապված, տեսական օրինակ. եթե ՄՈԸ-



ն իր աշխատողներին վճարում է տարեկան 10 միլիոն դրամ աշխատավարձ, իսկ նրա շրջհարկը 5% է, ապա եթե բոլոր աշխատավարձերը վճարի «սպիտակով», ապա կազատվի 500 հազար դրամ հարկից (10 միլիոնի 5%-ից):

Իսկ պետության շահը ո՞րն է Չարկը ավելացնելով, իսկ հետո արտոնության դուռը բացելով՝ ֆինանսին առաջարկում է մի քանի հարց լուծել: Նախ՝ «սպիտակ» աշխատավարձը նշանակում է աշխատողի գրանցում՝ բոլոր իրավունքներով: Երկրորդ՝ եկամտային հարկի լրացուցիչ վճարումներ: Երրորդ՝ փոքր ու միջին բիզնեսը կսկսի սովորել ԱԱՀ/շահութահարկին մոտ հաշվապահություն վարել՝ հաշվարկելով հարկերի նվազեցումներ:

«Շրջհարկի հաշվարկները, էստ էությամբ, մոտ կլինեն ԱԱՀ/շահութահարկի հաշվարկներին, ու փոքր բիզնեսը կտեսնի, որ դրանք այդքան էլ «վախենալու» չեն: Երբ նրանք սկսեն տիրապետել այդ հաշվառմանը, հնարավոր կլինի քննարկել հարկման միասնական համակարգի գաղափարը», - նշում է Ալավերդյանը:

Սա կարող է լուծել տարբեր հարկային ռեժիմների բախման խնդիրը, որը երկար տարիների զլխացվանք է մեծ ու փոքր բիզնեսի միջև գործարքների համար (օրինակ՝ սուպերմարկետներին եւ փոքր արտադրողներին): Այդ խնդիրը, Ալավերդյանի խոսքով, ըստ էության չի կարող լուծվել, քանի դեռ մնում են հարկման տարբեր ռեժիմներ:

Ի՞նչ կտա բյուջեին Մի կողմից շրջհարկի չափերը կբարձրանան, մյուս կողմից բիզնեսին թույլ կտան ավելի շատ հարկ նվազեցնել: Ֆինանսին ակնկալում է, որ «պլուս-մինուս» հանրագումարով տարեկան բյուջեն կշահի 14-15 միլիարդ դրամ: Ալավերդյանն ընդգծում է՝ սրանք մոտավոր գնահատականներ են, որոնք հաշվի են առնում միայն դրույքաչափերի փոփոխությունը:

«Որքան բիզնեսն ուզենա իր հարկը նվազեցնել, այնքան ճշգրիտ պետք է հայտարարագրի իր շրջանառությունն ու աշխատողներին: Ստույգ գնահատել հնարավոր չէ՝ որքան է հնարավոր թերախտարագրումը հիմա, բայց ակնհայտ է, որ լրացուցիչ մուտքեր պիտի սպասենք նաև սովորելի կրճատման հաշվին», - հավելեց Ալավերդյանը:

ՀՀ-ԵՄ

ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պաղոյանն ընդունել է Հայաստանում Եվրոպական Միության դասվիրակության ղեկավար, դեստան Վասիլիս Մարագոսին: Հանդիպմանը ներկա են եղել նաև նախարարի տեղակալներ Ռաֆայել Գևորգյանն ու Նարեկ Հովակիմյանը:

Ինչպես տեղեկացնում է Էկոնոմիկայի նախարարությունը, կողմերը հանդիպմանը քննարկել են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանը, ԵՄ կողմից տրամադրվող ոլորտային ֆինանսական եւ տեխնիկական աջակցությունը, Արեւելյան գործընկերության շրջանակներում երկկողմ եւ բազմակողմ համագործակցությանը, համա-

տեղ իրականացվող ծրագրերին եւ նախաձեռնություններին առնչվող մի շարք հարցեր: Անդրադարձ է կատարվել ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀՈԳՀ/CEPA) ներքո ամրագրված դրույթների իրականացմանը, «Հայկական կոնյակի» նոր անվանման վերաբերելովորման եւ շուկայահաման գործընթացներին, ձեռներեցության ոլորտի աջակցության ծրագրերին, ԵՄ տեխնիկական աջակցության գործընկերի (TAIEX, Twinning) կիրառմանը եւ այլ հարցերին:

Կողմերը մտքեր են փոխանակել ՀՀ-ի տնտեսության առաջնահերթ ուղղությունների, արտահանման խթանման ու դիվերսիֆիկացիայի, ներդրումների ներգրավման, կապիտալ շուկայի զարգացման,

որակի ենթակառուցվածքների բարելավման, գյուղատնտեսության զարգացման եւ վերջինիս մասով ԵՄ կողմից տրամադրվող աջակցության ծրագրերի ուղղությամբ:

Կարելի է ներկայումս ստեղծված նոր իրողությունների շրջանակներում ԵՄ հետ փոխհարաբերությունների խորացման ՀՀ հանձնառությունը եւ պատրաստակամությունն առավել ակտիվ մասնակցություն ունենալու ԵՄ կողմից իրականացվող եւ նախատեսվելիք տարածաշրջանային ծրագրերում:

Նախարարը հյուրերին ներկայացրել է նաև ՀՀ կառավարության «խաղաղության խաչմերուկ» նախագիծն ու դրա սկզբունքները:

ԷՄՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 30 պատահար. 2 մարդ զոհվել է, 45-ը ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԵՐՔԻ ԿՐԾԱՏՈՒՄ

ՇՈՒՄԱՐՆԵՐ ԿԹԱՆԿԱՆԱ

Շուկայում 2024-ի ամբողջ աշխարհում մի քանի անգամ կթանկանա: Պատճառը կակայի համաշխարհային դեֆիցիտն է: Գանայում եւ Կոտ դ'Իվուարում, որոնք մատակարարում են աշխարհում կակայի հումքի 60-70 տոկոսը, հատկապես կակայի բերքի ծավալները կտրուկ նվազել են: Վերջին ամիսներին միջազգային շուկայում կակայի հատկապետը շուկայի գին է գրանցել. եթե 2 տարի առաջ 1 տոննա կակայի արժեքը 2.200 դոլար, ապա այսօր ավելի քան 4 անգամ բարձրացել է՝ գերազանցելով 10 000 դոլարը: Կակայի բերքի կրճատման պատճառով առաջիկա 1 տարվա ընթացքում կանխատեսվում է, որ շուկայի գինը մոտ կրկնակի կբարձրանա:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

«Բիւսնես» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գլխի բարձրացմամբ), այնուհետեւ՝ «հոլանդական» (գլխի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, 23/3 շենք, 21 հասցեում գտնվող 77,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 53790000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 02.05.2024թ.-ին եւ 03.05.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, Նույն վայրում, Նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախաձեռնողը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գլխի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախաձեռնողը վճարվում է «Բիւսնես» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդի մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախաձեռնողի մոծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուծման երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդի մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախաձեռնող վերադարձվում է աճուրդի ավարտվելուց հետո ով աշխատանքային օրվա ընթացքում: Նախաձեռնողը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը իրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առավելագույնը պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախաձեռնողը: Եթե Կազմակերպիչը իրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախաձեռնողը:

Լոտի ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գլխի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել [www.ilcbst.am](http://www.ilcbst.am), [www.borsa.am](http://www.borsa.am) կայքեր:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են «Ակադեմիական ֆաղափ»-ի գլխավոր հասակագծին և ՏՐԱՆՏՊՈՐՏԱՅԻՆ ԵՆՔԱԿԱՅՈՒՄՎԱԾՄԵՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽԱՐԵՐ: Խորհրդակցությանը մասնակցել են «Ակադեմիական ֆաղափ» հիմնադրամի հոգաբարձուներ խորհրդի անդամները, Ակադեմիական ֆաղափի գլխավոր հասակագիծը նախագծող gmp International GmbH Architects and Engineers ընկերության փոխնախագահ Թորիաս Քելլը, ռուսաստանացի զբոսաշրջությունների ղեկավարներ:



Թորիաս Քելլը, ներկայացնելով գլխավոր հատակագիծը, նշել է, որ հիմնական քաղաքներից հեշտությամբ՝ 2 ժամում, կարելի է հասնել Ակադեմիական քաղաք, քանի որ վայրի առումով տեղանքը բավականին լավ է՝ մոտ է եւ օդանավակայանին, եւ Հյուսիս-Յարավ մայրուղուն: Մանրամասներ են ներկայացվել համալսարանների տեղակայման, կացարանների, ճանապարհային ցանցի, լանդշաֆտի վերաբերյալ: Նրա խոսքով՝ նախագծի մշակման ընթացքում հաշվի է առնվել Թամանյանական նախագիծը՝ դրանով փորձելով կապ հաստատել Երեւանի պատմության հետ: «Անցած անգամ մենք խոսում էինք «Հայֆիլմ»-ի հետ ինտեգրման մասին: Մենք ունեցել ենք չորս հաջողակ խմբեր, որոնք շատ հետաքրքիր նախագծեր են ներկայացրել, թե ինչպես կարելի է «Հայֆիլմ» ստուդիայի տարածքը վերակենդանացնել: Հույսով եմ, որ կկարողանանք այս գաղափարները բերել Հայաստան», - հավելել է GMP միջազգային ընկերության փոխնախագահը: Թորիաս Քելլը ընդգծել է, որ նախագծի շրջանակում ուսումնասիրվում է նաեւ կայունության թեման, որովհետեւ Ակադեմիական քաղաքն ապագայի համար է, եւ այն պետք է կենտրոնացած լինի այնպիսի թեմաների վրա, որոնք վերաբերում են ոչ միայն այսօրվան, այլ նաեւ վաղվան:

Վարչապետի խոսքով՝ քաղաքի կոնցեպտի հետ կապված մակրոհարցեր այլեւս չկան եւ պետք է անդադարձնալ հայեցակարգային կետերին. «Տեսլականի առումով մենք գործնականում պրոցեսի ամեն քայլը, ամեն շարժը տեսել ենք: Հարցեր ունեցել ենք, վերապահումներ չենք ունեցել: Իհարկե, սա այն է, ինչ մենք ուզում ենք», - ասել է Նիկոլ Փաշինյանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաեւ տրանսպորտային եւ ճանապարհային ցանցի, տրանսպորտային այլընտրանքային միջոցների տեխնիկատնտեսական վերլուծության իրականացման ձեռնարկի հարցը, անդրադարձ է կատարվել քաղաքաշինական գարագաման եւ գույքի կառավարման մոդելի մշակման ընթացակարգերի հետ կապված թեմային: Տրանսպորտային ենթակառուցվածքի գարագաման թեմայի հետ կապված՝ վարչապետն անդրադարձել է «Սասունցի Դավիթ» կայարանից երկաթուղով դեպի Ակադեմիական քաղաքի հատված կատարած շրջայցին: «Իմ

ուպավորությամբ, եթե անկեղծ ասեմ, ես չեի սպասում, որ օրվա առաջին մասում մենք կգնանք եւ կես ժամում կհասնենք այնտեղ», - նշել է Նիկոլ Փաշինյանը եւ հավելել, որ տրանսպորտային ենթակառուցվածքների ճշգրիտ մոդելավորման համար անհրաժեշտ է մոդելավորել այն միջին վիճակագրական մարդուն, ով մնալու է Ակադեմիական քաղաքում, եւ ով ամեն օր գալու է եւ գնալ: Հանդիպմանը քննարկվել են նաեւ այն աշխատանքների շրջանակը, որոնք արդեն իսկ կարելի է մեկնարկել: Նշվել է, որ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հաստատումից հետո, հաջորդիվ կմեկնարկեն երկաթուղու եւ մշակութային հատվածի նախագծման աշխատանքները: Քննարկումների արդյունքում վարչապետը համապատասխան հանձնարարականներ է տվել պատասխանատուներին՝ նախագծի իրականացման աննշվող տարբեր հարցերի վերաբերյալ:

ՀՄՍՍ ՄԻՔԱՅՆԵՆՍՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

«Բիւսնես» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գլխի բարձրացմամբ), այնուհետեւ՝ «հոլանդական» (գլխի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Ծենգավիթ, Ն.Ծենգավիթ, 3-րդ փողոց, 49 հասցեում գտնվող 435,6 ք.մ. բնակելի տուն եւ 0,0379 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 60000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., Պիոներական փողոց, թիվ 1 մասսայական սենդի միավորման 1 գրասենյակ հասցեում գտնվող 14,5 քմ սանհանգույց, 19,74 քմ գրասենյակ, 126,05 քմ սպ. օբյեկտ, 37,3 քմ սպ. օբյեկտ N 3, 4 եւ 0,027301 հա հողամաս, 0,003028 հա ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 60000000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ, Արթիկ ք., Տուֆաղործների փողոց, 120 հասցեում գտնվող 14,4 քմ կաթսայատուն, 457 քմ անասնաշենք, 98,5 քմ արտադրամաս, 450,73 քմ անասնաշենք, 35,37 քմ ջրավազան, 50,49 քմ պահեստ, 61,68 քմ ավտոտնակ, 36,27 քմ ջերմոց (ավարտվածության աստիճանը՝ անավարտ), 59,51 քմ հովվի տուն, 1,32 քմ հարթակ, 3,32 քմ ինքնակամ պարիսպ եւ 0,5 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40000000 ՀՀ դրամ:

«Հայաստանի Զարգացման եւ Ներդրումների Կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող՝

- ք. Երեւան, Կենտրոն, Մ. Մկրտչյան փողոց, 1 շենք, 18 հասցեում գտնվող 104,8 ք.մ. բնակարան:

Ծենցի ավարտվածության աստիճանը 50-80% է: Լոտի մեկնարկային գինը՝ 84000000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Անի, գյուղ Հայկաձոր, 1-ին փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող 394 քմ վարչական շենք, 975,25 քմ մաքրման կայան, 179,14 քմ լաբորատորիա, 107,3 քմ կաթսայատուն եւ 0,25238 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 38300000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 02.05.2024թ.-ին, 03.05.2024թ.-ին եւ 06.05.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, Նույն վայրում, Նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախաձեռնողը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գլխի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախաձեռնողը վճարվում է «Բիւսնես» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդի մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ - Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախաձեռնողի մոծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուծման երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդի մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախաձեռնողը վերադարձվում է աճուրդի ավարտվելուց հետո ով աշխատանքային օրվա ընթացքում: Նախաձեռնողը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը իրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առավելագույնը պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախաձեռնողը: Եթե Կազմակերպիչը իրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախաձեռնողը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գլխի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել [www.ilcbst.am](http://www.ilcbst.am), [www.borsa.am](http://www.borsa.am) կայքեր:

«ժողովուրդ» օրաթերթում եւ [Armlur.am](http://Armlur.am) կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԸՆԹԵՐՑԱՍԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԿՆՄԲՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹ

Արդեն 20 տարի շարունակ առօրյա գրադարան է հայաստանյան գրադարանների համար: Գրական միջոցառումներն ու շաբաթը մի քանի օրվա ընթացքում են խոստանում: Գրական մարտն ու այս տարի կենտրոնի վաղվանից՝ ապրիլի 15-ից և կեսի մինչև ապրիլի 22-ը՝ «Գրադարանը՝ նորարարության հարթակ» կարգախոսով: Գրադարանային թե՛ շաբաթը մի քանի օրվա գրադարանային և մշակութային իրադարձություններով է հագեցած լինելու, հասկալիս Հայաստանի ազգային գրադարանում: Այս տարի այն համընկնում է նաև Ազգային գրադարանի և ազգային գրադարանային հավաքածուի ձևավորման 105-ամյակների հետ:



Եւ համերգային ազդագրերի ուղեկցությամբ:

Ապրիլի 15-ին՝ 14:00-ին, Ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում արվեստաբան, գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանի 75-ամյակի առթիվ Ազգային գրադարանը կազմակերպել է նրա հեղինակած եւ աշխատասիրած գրքերի ցուցադրություն, ինչպես նաեւ նրան նվիրված նոր գրքի ներկայացում:

Թմանյանական փոքր ցուցասրահում բացված ցուցադրությունը, ի թիվս այլ հրատարակությունների, ներառում է արվեստաբանի կազմած, խմբագրած, ծանոթագրած ավելի քան ութ տասնյակ գրքեր եւ պատկերագրեր: Կոստան Զարյան (20 գիրք), Սիլվուշի գրողներ (19 գիրք), Վիլիելմ Մաթեոսյան, Հակոբ Հակոբյան, Փառու Թերլեմեզյան, աշխարհահռչակ նկարիչներ եւ այլն: Երվանդ Տեր-Խաչատրյանի ստեղծագործական ուղին կներկայացնի գրող, գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչիկյանը:

Ապրիլի 15-ին՝ 12:45-ին, Ազգային գրադարանային շաբաթի շրջանակում Ազգային գրադարանի աշխատակից Արմինե Վարդանյանը ներկայացրեց EBSCO բազմակուսակցական տեղեկատվական շտեմարաններից օգտվելու կարգը: EBSCO Publishing-ն առաջարկում է լիատեքստ գիտական ամսագրեր, որոնք հրատարակվում են բարձրորակ եւ վստահելի հոդվածներ՝ ճանաչված հրատարակիչների ընտրությամբ՝

ըստ հետազոտողների կարիքների: Առաջին անգամ EBSCO-ն առաջարկում է նաեւ հայերեն կոլեկցիա:

Ապրիլի 16-ին՝ 14:00-ին, Ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում Հայաստանի ազգային գրադարանը Ֆրանկոֆոնիայի երկամսյակի առթիվ կազմակերպել է հանրային դասախոսություն «Տպագրությունը Ֆրանսիայում 19-րդ դարի առաջին կեսին» թեմայով:

Հայաստանի ազգային գրադարանի Ֆրանսիացի ստաժոր Վադիմ Բեմը, օգտվելով Ազգային գրադարանի ֆրանսիական հավաքածուի իր հետազոտությունից, «Տպագրության, հրատարակչական գործի եւ հրատարակիչների պատմությունը՝ Ֆրանսիայի դիպլոմի մինչև Ժյուլ Էջե (1800-1860)» վերնագրով զեկույց կներկայացնի:

Նա կցուցադրի նաեւ Ազգայինի հարուստ հավաքածուի բացառիկ նմուշներ:

Ապրիլի 19-ին էլ Հայաստանի ազգային գրադարանը կազմակերպելու է ընթերցանության մարաթոն, որը նվիրված է հայ նշանավոր գրող Ալսեդ Բակունցի ծննդյան 125-ամյակին: Մասնակիցներն իրար հաջորդելով եւ 5-ական րոպե հերթական հատվածը կարդալով կշարունակեն Բակունցի «Կյոթես» վեպի ընթերցումը մինչև ավարտը, եւ կընթերցվեն գրողի մի շարք պատմվածքներ: Ընթերցանության ընթացքը ուղիղ կհեռարձակվի ZOOM հարթակում եւ ՀԱԳ յուրօրյան ալիքում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻԻԹԱՐՅԱՆԻ ՆՈՐ ՆՊԱՏԱԿԸ

Իտալական «Ինտեր»-ի եւ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Յենրիխ Մխիթարյանի համար ընթացիկ մրցաշրջանի կարեւոր նպատակներից է իտալական Սկուդետոն նվաճելը:

«Սա հետքայլ չէ: Մենք ցանկանում էինք հաղթել, բայց մեկ միավոր վատակեցինք: Մեկ նպատակ ունենք՝ նվաճել Սկուդետոն: Յուրաքանչյուր չեմպիոնական տիտղոս նվաճվում է դժվարությամբ: Իտալիայում մեծ ուշադրություն է դարձվում մարտավարությանը, այստեղ լավ թիմեր են եւ շատ ուժեղ խաղացողներ», - Մխիթարյանի խոսքերը փոխանցում է ակումբի մամուլի ծառայությունը:

Հայ կիսապաշտպանը հույս է հայտնել, որ իրենց կհաջողվի, այնուամենայնիվ, դառնալ Իտալիայի չեմպիոն:

«Մենք չենք հանձնվի եւ պետք է հաղթենք առաջիկա խաղերում, որպեսզի մրցաշրջանն ավարտենք՝ կատարելով մեր խնդիրը: Ես ինձ հիանալի եմ զգում եւ ցանկանում եմ խաղալ յուրաքանչյուր խաղում», - ասել է Մխիթարյանը:

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 32-րդ տուրում «Ինտեր»-ը հյուրընկալել էր «Կալյարի»-ին: Միլանում կայացած հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 2:2 հաշվով: Հայաստանի հավաքականի նախկին ավագ Յենրիխ Մխիթարյանն «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 65-րդ րոպեին: Այս տուրից հետո էլ «Ինտերը» 83 միավորով գլխավորում է Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակը:

5 ՄԵՂԱԼ

Հայաստանի բռնցքամարտի երիտասարդական թիմը Եվրոպայի առաջնությունում, ընդհանուր առմամբ, նվաճել է 5 մեդալ:

Երիտասարդ բռնցքամարտիկները նվաճեցին 3 արծաթ եւ 2 բրոնզ:

Պատվո հարթակի երկրորդ աստիճանին են կանգնել 51 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը, 92 կգ քաշային Դավիթ Սիմոնյանը եւ գերծանր քաշային Միսակ Տեպալյանը: Հայաստանի հավաքականի կազմում էրիկ Առստամյանն ու Լուսյա Ավետիսյանը նվաճեցին բրոնզե մեդալ:

Առաջիկա օրերին բռնցքամարտում ուշադրությունը եւեռվելու է արդեն Սերբիայի վրա, որտեղ կայանալու է մեծահասակների Եվրոպայի առաջնությունը: Հայաստանը ներկայացնելու է 13 տղա եւ 6 աղջիկ:

ՊԱՐՊԱՆԵԼ Ե ԳԻՐՔԸ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչատրյանը պահպանել է դիրքը ATP դասակարգման նոր աղյուսակում:

Ապրիլի 15-ին վարկանիշային աղյուսակում Խաչատրյանը կրկին 17-րդն է, ինչպես նախորդ շաբաթ: Առաջին հնգյակում փոփոխություն չկա, միայնց հաջորդում են Նովակ Ջոկովիչը, Յանիկ Սիները, Կարլոս Ալկարասը, Դանիել Մեդվեդեւը, Ալեքսանդր Զվեռնը:

Լավագույն տասնյակում են նաեւ Կասպեր Ռոլդը, Ստեֆանոս Ցիցիպասը, Անդրեյ Ռուբլովը, Յուրյան Գրեկորովը, Գրիգոր Դիմիտրովը:

«ԾԱՂԿՈՒՆՔ» 5

ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

«Կամուրջ» մշակութային կենտրոնն ապրիլի 27-ին Կարեն Գեմիճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացնի դարի «Ճաղկունք» միջազգային 5-րդ փառատոնը, որը նվիրված կլինի ապրիլի 29-ին ճգնաժամի միջազգային օրվանը:

Ինչպես տեղեկացնում են Կամուրջ» մշակութային կենտրոնից, փառատոնի նպատակն է՝ մեկ միասնական հարթակում միավորելով ներկայացնել աշխարհի տարբեր ազգերի պարերը՝ Հայաստանի ու արտերկրի մանկապատանեկան եւ երիտասարդական խմբերի միջոցով:

Փառատոնն իրենց մասնակցությամբ կգեղեցկացնեն Հայաստանի, Ֆրանսիայի, Ստասբուրգ եւ Լիոն քաղաքների, Վրաստանի, Լեհաստանի ու Ուկրաինայի մի շարք պարային համույթներ, անսամբլներ եւ երգչախմբեր: Փառատոնին ներկա կգտնվեն նաեւ սիրված եւ ճանաչված երգիչներ Հայաստանից:

Նշվում է, որ «Կամուրջ» մշակութային կենտրոնը մշտապես միտում ունի նպատակ պարարվեստի հանրայնացմանը:

«Պարը մշակութային հաղորդակցման լեզու է, ազգային մշակութային արժեք: Այն արվեստների յուրօրինակ համադրում է: Պարի միջոցով մարդիկ փոխան-

ցում են իրենց զգացողությունները, հույզերը, ուրախությունը, ոգին, նաեւ ազգի մտածողությունն ու մշակույթը, մղում ինքնաճանաչման, ազգային արժեքների բացահայտման՝ կամրջելով տարբեր աշխարհագրությունների մշակույթներ, ստեղծելով փոխճանաչման հիմքեր: Այն արվեստի միասնական ձեւ է, որը չի ճանաչում քաղաքական, էթնիկ, մշակութային որեւէ սահման: Պարը զորեղ միջոցներից է՝ ներաշխարհի հարստացման, ինքնաճանաչման եւ ազգը համախմբելու առումով», - ասվում է հաղորդագրության մեջ:

ՀՈՐԻ ԲՆԴՆԱՍՏՈՐՅԱՆ

● Ապրիլի 19-ին՝ ժամը 15:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Խենթը» ներկայացումը՝ ըստ Ռաֆֆու համանուն վեպի: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:



### ԿԵՆՍԱԹՈՇՎԱԿՆԵՐ

**ՀԱՐՑ. Եթե լրացել է անձի՝ կենսաբուսական անցանկում սարիքը, առաջ դիմում ներկայացնելու համար նախքան անձի և ուր ներկայանա:**  
**Լաուրա Խաչատրյան (63 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կենսաթոշակ նշանակող մարմին:

Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

- 1) դիմումը,
- 2) անձը հաստատող փաստաթուղթը,
- 3) հանրային ծառայությունների համարանիշը,
- 4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),

5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,

6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձևը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

**Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

### ՄԱՔՍԱՎՅԻՆ

**ՀԱՐՑ. Հեռաբեր է իմանալ՝ մաքսային հսկողության ներքո զտվող սրահադրոսային միջոցը այլ անձի հանձնելու դեպքում ինչ չափով տուգանվ է առաջադրվում:**

**Գրիշ Մարտիրոսյան (49 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գ. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 198 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

**Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Ավելացնենք, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

## ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

### ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի



Կոմիտասի շուկան ցանկանում են փակել. աշխատակիցներին մինչեւ մայիսի վերջ ժամանակ են տվել՝ դուրս գալու այնտեղից: Այս պատճառով երկի Կոմիտասի շուկայում աշխատակիցների եւ քաղաքացիների շրջանում դժգոհություններ էին հասունացել:

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
 Բաժանորդագրվելու  
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ  
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊԲԸ  
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

### ԱՌԱՋԱՐԿ

#### հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

#### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ \_\_\_\_\_  
 Ազգանուն՝ \_\_\_\_\_  
 Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

### ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+4 + 7 +8 + 13	Արարատ	+11 + 13 +16 + 19
Կոտայքի լեռներ	+2 + 6 +8 + 10	Արմավիր	+2 + 4 +6 + 8
Կոտայքի նախալեռներ	+8 + 10 +12 + 16	Վայոց ձորի լեռներ	+1 + 4 +6 + 8
Գեղարքունիք	+2 + 5 +6 + 10	Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13 +15 + 19
Լոռի	+4 + 7 +9 + 11	Սյունիքի հովիտներ	+8 + 10 +13 + 15
Տավուշ	+7 + 10 +12 + 15	Սյունիքի նախալեռներ	+4 + 6 +7 + 9
Արագածոտնի լեռներ	+8 + 11 +7 + 10	ԼՂՀ	+2 + 5 +7 + 9
Արագածոտնի նախալեռներ	+3 + 6 +12 + 16	Երեւան	+12 + 14 +17 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22<sup>ա</sup>/3, հեռ.՝ 010 54-64-23  
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
 տրված է 24.11.2010  
 Ստորագրված է տպագրության 15.4.2024

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: